ՆՈՐ-ԴԱՐ

№ 62 ՏԱՍՆԵՒՄԷԿԵՐՈՐԴ ՏԱՐԻ, Երեքշաբթի, 12 Ապրիլի 1894 Երեքշաբթի, 12 Ապրիլի ՏԱՍՆԵՒՄԷԿԵՐՈՐԴ ՏԱՐԻ, № 62

Տարեկան 10 ռուբլի, վեց ամիսը՝ 6 ռուբլի, երեք ամիսը՝ 3 ռուբլի 50 կոպ.
Թիֆլիսում՝ ամիսը՝ 1 ռուբլի, հատով 5 կոպէկ։
Բաժանորդ դրուում են Թիֆլիսում միմիայն խմբագրատանը։

Խմբագրութեան հասցէն Тифлисъ. Редакція „Норъ-Даръ“
կամ Tiflis. Rédaction „Nor-Dar“

Խմբագրութիւնը բաց է ամեն օր (բացի տօն օրերից) ժամը 9-ից մինչեւ 2-ը
Յայտարարութիւններն ընդունւում են ամեն լեզուներով։
Յայտարարութիւնների բառին 2 կոպ., բեկլամների համար կրկնապատիկը

ԿԱՂՈՒԱԾԱԿԱՆ ԲԱՆԿԻ ԹԱՏՐՈՆ

Երկուշաբթի, ապրիլի 18-ին, լինելու է

ԿՕՆՑԵՐՏ

Պետերբուրգի Կայսեր. օպերայի Լոնդոնի Կովենտ-Գարդինի թատրոնի երգչուհի

ՄՐԱՒԻՆԻ

մասնակցութեամբ Պետերբուրգի Կայսերական օպերայի երգչուհի

ՖՐԷՅԻ

Տոմսակները ծախւում են Պ. Բ. ՄԻՐԻՄԱՆՅԱՆԻ երաժշտական դէպօյում, Դվորցովայա փողոց։

(196) 3—1

ԲՈՎԱՆԴԱԿՈՒԹԻՒՆ

Վեհափառ Կաթողիկոսի կոնդակը։
Քրոնիկոն.—Վանքի վերաշինութեան գործը։ Ս. Էջմիածնից։ Կովկասի լեռնաշղթայի վրայով անցկացնելիք երկաթուղու խնդիրը։ Մոսկու այից։ Սարկաւագի կոչումնատուութիւն։ Բանտիսութեան տեսութիւն։ Հակելի վերադարձը։ Կոնցերտ տուողներ Թիֆլիսում։ Նոր օրէնդրութիւն պետական կալուածների Կովկասի վարչութիւններին վերաբերեալ։ Էլբրուսն և Անդրկասպեան երկիրն ուսումնասիրողներ։ Դիլիջանից։ Սալեանից։ Պօղոս-Քիլիսայից։ Արշէն երէցի քարոզը։ Վրիպակ։
Արտասահմանի հայ թերթերից։
Արշէն երէցի քարոզը։
Թղթակցութիւններ.—Պետերբուրգ։
Քաղաքական.—Քաղաքական լուրեր։
Թատրոն լուրեր։
Հեռագիրներ։
Տեղեկատու։
Յայտարարութիւններ.

ԱԿՐՏԻՉ ԾԱՌԱՅ ՅԻՍՈՒՍԻ ՔՐԻՍՏՈՍԻ ԵՒ ՈՂՈՐՄՈՒԹԵԱՄԲՆ ԱՍՏՈՒԾՈՅ ԿԱԹՈՂԻԿՈՍ ԱՄԵՆԱՅՆ ՀԱՅՈՑ ԾԱՅՐԱԳՈՅՆ ՊԱՏՐԻԱՐՔ

Համազգական Նախամեծար Աթոռոյ Արարատեան Առաքելական Մայր Եկեղեցւոյ Սրբոյ Կաթողիկէ Էջմիածնի

Աւետարանի սիրոյ ողջոյն մատուցանեմ առ ամենայն Եկեղեցիս Հայոց, որք կան ընդ հովանեաւ Մեծին Ռուսիոյ Ինքնակալ Թագաւորութեան։ Աղօթս առնեմ վասն ձեր ամենեցուն հանդերձ միաբանական ուխտիս, կալ մնալ ձեզ ի շնորհս Տեառն ի ճշմարիտ հաւատս Աստուածպաշտութեան ի սէր և ի պատուիրան Աւետարանի ընկերակցութեան. որոյ յայտնացոյց նշանաւ միայն ճանաչէ զձեզ աշխարհ թէ դուք Քրիստոսին էք և Քրիստոս ձեր։

Յետ ողջունական բանիս, այժմ մասնաւոր կոնդակաւս պիտի խօսիմ ընդ քեզ, ժողովուրդ Հայոց, պարզ լեզուով և ոճով, որպէս զի դու չքմեղս լինելով չասես թէ չեմ հասկանար և չեմ իմանար զրոց լեզուն

Ես գիտեմ քո բնաւորութիւն. դու շուտով կըգայթակղիս և դուճէ մեղադրելով կասես. Հայրիկ գըշարուած ու պարաւանդուած է։

Այսօր գրեթէ վեցերորդ ամիսն է այն օրէն, երբ ես արժանի եղայ ողջունել Էջմիածնայ Մայր Աթոռ՝ շուտ անցան գնացին այնչափ ովսաննաներ և մեծադղորդ կեցցէներն և այժմ խոր լռութիւն և տխրութիւն տիրեցին մեր շրջապատը և միայն լսւում են անօթի, քաղցած գիւղական ժողովուրդին և ընտանեաց մանրիկ զաւակներուն լացն ու աղաղակ։

Վեց ամսեայ միջոցում գրեթէ հազարէն շատ աւելի զանազան խնդիրներ եկան կուտուեցան առաջս։ Այդ խնդիրներ բազմատեսակ էին, մեծ մասն ամուսնական կնճռալից գործեր էին, որք խընդրում էին լուծել և շուտափոյթ լուծել։ Մի մասն ևս գիւղական ժողովուրդի խնդիրներ էին, որք դաս-դաս խմբովին եկան ներկայացան հետզհետէ և մատուցին իրենց համախօսական թղթեր, որոց թիւ հասնում էր մինչև հարիւր լիսունէն աւելի, և ինչ էին խընդրում. Հայրիկ, քահանայ կուզենք, քահանայ։ Ոմանք հաստատելով ասում էին. Հայրիկ, մեր գիւղեր՝ կան որ հինգ տարի, ութ տարի և մինչև ասն տարի է, որ ծխատէր ու սեպհական քահանայ չունիմք, որչափ դժուարութեամբ ուրիշ գեղաններէ քահանայ կըմուրամք, մանաւանդ ձմեռը ձիւն ու բուք եղած ժամանակ։ Ոմանք թէ, մեր գիւղերու քահանաներ ութսուն տարին անցուցած, խիստ ծերացած զառամութեան վիճակին հասած են, էլ չեն կարող պաշտօն կատարել։ Ժողովուրդի այս խընդրոց համար չեմ ուզեր մանրամասն գրել. «Արարատի» մէջ թող կարդան ընթերցողներ Արշէն երէցի քարոզ։

Այս խնդիրներ ամեն ժամանակ սովորաբար եղած են և և այնքան վհատեցուցիչ չեն, որևիցէ եղանակաւ կարելի է լուծել, կարգադրել և գոհ անել խնդրատուներն։

Բայց եկ տես, որ խնդրոց ամենամեծ մասն՝ գաղթականաց խընդիրն է, բոլորովին չքաւորած, կըտոր մի հացի կարօտ գիւղական ժողովրդի պաղատանքն է, որոնք խումբ խումբ իրենց ընտանիքով, մանրիկ զաւակներով սկսեալ աշնանէն մինչև յայսօր՝ կուգան կըլեցուին Էջմիածնայ Հայրապետանոցը։ Եւ տես դու ինչ անհանդուրժելի տեսարան բացւում է մարդոյն աչքին առաջ։ Եւ ով կարող է գլխոտ աչքով նայել ու չարտասուել։

Գիտես թէ լքեալ ու յուսահատ ժողովուրդի հոգին իր անձկութեան մէջ բանաստեղծ կըդառնայ, և քանի՞ բնական ու սրտառուչ նկարագիր կըհանէ թղթերուն վրայ և իւր կրած ցաւեր պատմելու մի ճարտասան կըլինի։ Ես մըտիկ արի վշտագին ոգւով, դուք էլ մտիկ արէք, ժողովուրդ Հայոց, և տեսէք ինչ կասեն։

Հայրիկ՝ մեք ոչ ամուսնական խնդիր ունիմք և ոչ քահանայի, մեք թողինք մեր քահանայն մեր գիւղի եկեղեցւոյն պահապան. եկեղեցին ու քահանայն մնացին առանց ժողովրդի, թողինք մեր շտեմարան, ալիւրի փեթակ, հացն ու թոնիր, տանտիկին ելաւ տնէն, կարեցաւ ծուխն երդիքէն, թողինք մառնի եղեր, լի ամաններով պանիրներ, թողինք մեր կանաչ արտեր, մեր գուլթան ու հարօրներ, թողինք աննման Ալաշկերտու հայրենիք։ Հապա մեր սուրբ Յովհաննու երեքխորան վանք, Նպատ լեռ, Եփրատայ սուրբ գետ. ամեն մեր ինչքեր կողոպուտ տուինք, առինք միայն մեր ընտանիք, հարսներ ու հասած աղջիկներ, եկանք քրիստոնեայ երկրին ապաստանեցանք։ Մեք շատ զոհեր տուինք մեր ընտանեաց սիրոյն համար, որպէս զի ազատենք զանոնք առևանգող բիրտ քիւրտերուն ձեռքէն։ Է՞, Հայրիկ, մեք այժմ ուրիշ բան չենք խնդրեր, մեզ պէտք է միայն պատսպարան ու հաց, զի մեք անտուն անօթեւան մնացինք։

Այսպէս, ժողովուրդ Հայոց, ազուէսներ սեպհական որջ ունին, երկնից թռչուններ բոյն, ինչպէս ասաց Քրիստոս որ գլուխ դնելու տեղ չունէր։ Մինթէ Քրիստոսի նըման իւր հաւատացեալ գաղթական Հայ ժողովուրդ ունի՞ իւր գլուխ դնելու տեղ։

Կարսի սահմանագլխէն սկսեալ գաղթական ժողովուրդի տարաժութեան մի ծայր հասած է մինչև Երևանայ դաշտի գիւղեր. թէև մեծագոյն մասն Կարսի նահանգում տեղաւորուած են։ Զեմ մոռանայ երախտագէտ ոգւով յիշել ասայլտոնել իմ շնորհակալութիւնս Երևանայ և Կարսի նահանգապետներուն, որք բարձրագոյն հրամանաւ և իրենց բարեսիրտ աղնութեամբ թոյլ տուին գաղթական անտերունչ ժողովրդին, որ մինչև գարուն հիւրընկալուին Հայոց գիւղերում։

Եւ ինչ պիտի լինի գարուն, որ եկաւ ահա, միթէ անաշխարհիկ անբնակ բուսաւեր թռչնոց համար գարուն աւետաբեր է։ Որոց համար, առաջ, որչափ յարմար է բանաստեղծին երգ.

«Ինձ համար չէ գարնան գալը»։ Սոքա պիտի լիշեն Բագրեւանդայ և Սուկաւէտ ծաղկազարդ ու ջրաշատ լեռան գարուն։

Օրհնեալ լինին Եփրատայ և Արարատեան դաշտերու գիւղական բընիկ Հայ ժողովուրդներ, որք հիւրասէր Հայր Աբրահամու պէս իրենց դռներ բացին, ուր մտան տեղաւորեցան խեղճ ու թշուառ գաղթական ընտանիքներ։

Քանի՞ դառն ու դժար է, Բագրեւանդայ ճոխ տանուտէր, որոյ դուռ բաց էր, հացալից սեղան պատրաստ ամեն հիւրերուն, նա մարագի մի քունջ հաւու պէս ծուարեցաւ իւր ընտանիքով և ձագերով և լաւագոյն համարեց այս խղճուկ կեանքը, որ ազատեցաւ քիւրտերու սոսկալի բռնութենէն։

Այսպէս առ ժամանակ մի թէպէտ գիւղերում զետեղուած են գաղթական ընտանիք, այլ ամեն օր և շաբաթ դիմում են Մայր Աթոռի դուռը, ոչ միայն կարօտութեան համար, զի մեզ շատ յայտնի է նոցա դառնավիշտ վիճակ, թողունք օրապահիկ հացի սնունդ. կըտեսնամ՝ աչքովս իրենց պատառոտած կերպարանք, սոսկ կտաւէ շապկի մի կարօտ, մանկիկներ մերկ ու բորիկ։

Զարչարանքի վարժուած ժողովուրդը դեռ համբերում է այս տառապանքի մէջ և իւր սպագայն մտածելով հարցնում է, Հայրիկ, մեր վախճանը՝ ինչ պիտի լինի։

Իսկ ես խոր մտածութեան մէջ վարանած, չգիտեմ թէ ինչ պատասխանեմ կամ յուսադրեմ այդ լքեալ ու վհատեալ ժողովուրդ. կրսկսիմ վարդապետական քարոզ կարդալ, ամեն բան ու ժամանակի հանգամանքներ պարզ կերպով բացատրել իրենց և յորդորել, որ դարձեալ իրենց հայրենիք վերադառնան, վասն զի կարելի չէ, որ Արարատեան երկիր նոր գաղթականութիւն ընդունի, որովհետև իւր բնիկ ժողովուրդ այնչափ աճեր ու բազմապատկեր է, որ այլ ևս մշակելի հողեր բաւական չեն իրենց համար. դուք մի յուսաք թէ բնիկ երկրին ժողովուրդ թիզ մի տեղ ձեզ բաժին կուտայ. հաց ու պատսպարան տուաւ ձեզ մի փոքր ժամանակի համար, կարծում էք հող էլ պիտի տայ։

Դուք ձեր Ալաշկերտի դաշտում շատ հարուստ էիք ձեր ընդարձակ հողերով և իբրև տանուտէր կապրէիք, գիտէք ինչ դառն է ձեզ համար երբ հողատիրութենէն զրկուելով՝ ծառայ և մշակ դառնաք այստեղ և այնտեղ, ձեր սեպհական դերը օտարներ գրաւեն։

Չէ, Հայրիկ, չէ, դու չգիտես, մեր քաշած անտանելի զրկանքներ, թէ միայն ընչից յափշտակութիւն լինէր, այդ ոչինչ էր, զի մեք շատ վաղուց ի վեր սովորած եմք այդ կերպ զրկանքներուն, բայց

մեր աչքի առաջ մեր ամուսիններ և մեր աղջիկները ամենայն բրոնութեամբ վայրենի քրդեր յափշտակում են և կրոտանին բռնի կերպով Քրիստոսի հաւատք ուրանալ կուտան. այլ ևս մեք կարող ենք հանդուրժել։

Թող, Հայրիկ, թող, մեք ծառայ լինինք, մշակ դառնանք, միայն տպահով ապրինք մեր ընտանիքով ու զաւակներով։

Այսպէս կըմտածի կըխօսի ու պատասխան կուտայ վշտակիր ժողովուրդ և ով կարող է մեղադրել զինքն։

Թողուանք զաղթական ժողովրդին այս ցաւն ու տառապանք, մի այլ տառապանք ևս տառապանքի վերայ ծանրանալով սատակապէս ճընշում է Մայր Աթոռը։

Յայտնի է, որ երկու տարի իրարու վերայ երաշտութիւն լինելով երկինք անձրև չի տուաւ որ երկիր հայ բուսցնէր. ուստի Արարատեան դաշտի և մի քանի ուրիշ գաւառներու գիւղական ժողովուրդ ատաղիկ չքաւորած են, թէև քաղաքներում ցորեան ալիւր խիստ առատ է, սակայն երկրագործ ժողովուրդ փող չունի. սորա համար հարահատած խումբ խումբ գիմում են Մայր Աթոռին իբրև նորա հոգեծին զաւակներ ժառում են կամ հայ կամ փող և ուրիշ ոչինչ։

Այսպէս քաղցած ու նեղուած մեր Լուսաւորիչ սուրբ Հօր որդիքներ իրաւունք ունին իրենց Հօր տան և Աթոռին գիմել, հապա Հայրիկն ում գիմէ, ասացէք, ժողովուրդ Հայոց, եթէ ոչ առ ձեզ։

Ուստի հրաւէր կարդալով առ բոլոր սիրելի ազգայինս Ռուսիոյ, կոչում զձեզ ի գթութիւն, ի կարեկցութիւն գիւղական քաղցած ժողովուրդին։ Ոչ եթէ խնդրում եմ, որ համայն ազգայինք հաւասարապէս ընդհանուր հանգանակութիւն բանան, զի այդ մասին բարձրագոյն հրամանի սպասք կայ, այլ մասնաւորապէս կարող անձիքներէն կամաւոր նպաստ և ողորմութիւն կըխնդրեմ յանուն աղքատին, որ գիս իբրև իւր ձեռք կարկառում է։

Կարկառեցէք ուրեմն և դուք ձեր ձեռք այն բազմաթիւ աղքատ զաղարոսներուն, որոնք Էջմիածնայ տաճարին տակ շարուած սպասում են կոչնակի ձայնին, տեսնանք թէ ինչպէս վազելով կըթափեն ի սեղանատուն։ Միայն իրենց փոր կշտացնելով բաւական չէ, այլ սեղանէն ելնելով կըժողովին Վեհարանին և գանձատան դրան առաջ և սկսում են իրենց «Հայր մեր» այսպէս. մեր փորը կշտացաւ, Աստուած շէն պահէ Սուրբ Էջմիածնայ վանք, բայց, Հայրիկ, մեր ընտանիք, մեր մանրիկ աղէք անօթի նուաղած են տան մէջ հալած աչքերով սպասում են որ շուտով դառնամք։ Երկու երեք օրով անօթի մայրեր կան, որոց ծծերուն կաթ ցամքած է, կաթընկեր երեխաներն էլ իրենց դրկին մէջ ցամքած ու մարած են, Աստուծոյ սիրոյն լինի, տուէք մեզ հաց կամ փող տանենք հասցուենենք մեր սոված ընտանիքներուն։

Այս նկարագիր պիտի շարժէ անշուշտ մեր ազնուազուարթ մեծատանց և ամեն դասակարգի ժողովուրդին սիրտ. պիտի շարժէ նաև Հայոց մայրերու սիրտ, իրենց առատ և ճոխ սեղանի փշրանքներէն բաժին հանել աղքատ զաղարոսներուն։ Երանի թէ ես էլ արժանի լինիմ կատարել իմ հայրական պարտիքս և իբրև սպասաւոր մատակարարեմ այդ փշրանքներ կարօտած խեղճերուն.

Խոստովանիլ պէտք է որ մեր սակաւ փշրանքներ, նպաստ և ողորմութիւն մի-մի կաթիլ ջուր են, երբէք չեն բաւական պասքած ժողովուրդին ծարաւն անցուցնել, գորա համար յորդառատ գետ պէտք է, և այդ գետ բղխում է Մեր Մեծ խնամակալ Կայսեր տէրութեան ակնէն, որ իբրև երկնուց Հօր պատկեր ներկայանում է աշխարհիս վերայ. գիտէ Նորին Մեծութիւն իւր բարի կամք իգործ դնել և առատապէս բանալով իւր անսպառ աղբիւրին ակն և լիապէս ջուր տալ իւր հաւատարիմ հըպատակ ծարաւած ժողովուրդին։

Եւ ինձ կըմնայ յայնժամ աղօթել և հանապազ աղօթել մեր գթառատ Կայսեր թանկագին կենաց համար, որոյ կեանք բովանդակ երկրին և ժողովուրդի բարօրութեան կեանքն է։

Աղօթեմ և վասն ձեր, ժողովուրդ Հայոց, դուք ևս ընդունելով Հայրիկի հրաւէր ձեր փոքրիկ-փոքրիկ աղբերակներու ակներ բանաք և ծարաւած ժողովուրդին բաժակ բաժակ ջուր բաշխեք, գիտելով և հաւատալով որ վարձատրիչ Տէր Աստուած ձեր բաժակներու փոխարէն երկնից արքայութեան դրախտի գետերէն պիտի բաշխէ, որոյ ջուրն կենաց անմահական ջուր է։

Իսկ՝ թէ արժանի անէ Տէր ամեն ծարաւած հոգիներուն ըմպել այդ կենաց ջուրէն և օրհնել զանուն Նորա յաւիտեանս. Ամէն։

(Խոկականի վրայ ստորագրած է)

ՄԿՐՏԻՉ

ԿԱԹՈՂԻԿՈՍ ԱՄԵՆԱՅՆ ՀԱՅՈՑ

Դրեցաւ Կոնդակս ի 28 Մարտի 1894 ամի Փրկչական եւ ըստ տոմարիս Ռուսիոյ, ի Մայր Աթոռս Հայաստանեայց ի Ս. Էջմիածին։

Ի Վաղարշապատ.

ՔՐՈՆԻԿՈՆ

Հաղորդեցինք, որ Վանքի աւագ եկեղեցու վերաշինութեան համար Թեմիս Սրբազան Առաջնորդ գերապատիւ Գէորգ եպիսկոպոս Սուրէնեանցի հրաւիրանօք քաղաքիս առաջաւոր անձերի և համքարների աւագների ժողովն ընտրեց մի յանձնաժողով, որ եկեղեցու վերաշինութեան գործը պիտի հոգայ ըստ անհրաժեշտին, և մասնագէտների մի մասնաժողով, որ պէտք է պատրաստէ շինութեան տեղեկագիրը։

Երէկ, ապրիլի 11-ի երեկոյեան Սրբազան Առաջնորդն իւր ժամ էր հրաւիրել շինութեան տեղեկագիրը պատրաստող մասնագէտների մասնաժողովի անդամներին գործի մասին խորհրդակցելու։ Սրբազանն առաջարկեց մասնագէտներին իրենց կարծիքը յայտնել, թէ ինչպէս աւելի յարմար է՝ 1) Վանքի այժմեան շինութիւնը վերանորոգել միայն, 2) նորը կառուցանել նոյն տեղում, թէ 3) եկեղեցին թողնել այնպէս՝ ինչպէս կայ և շինութիւնը կանգնեցնել բոլորովին այլ տեղում։ Սրբազանի կարծիքն այն էր, որ եկեղեցին բոլորովին նոր տեղում շինուի, այսինքն վանքապատկան այն դեռնի վրայ, որ գտնւում է Վաղարշապատ փողոցում, այժմեան եկեղեցուն կից։ Ի միջի այլոց, ինժեներ պ. Նիկողայոս Գրիգորեանը յարմար գտաւ, որ եկեղեցին շինուի այն տեղում, որտեղ Ներսիսեան դպրանոցի նոր շինութիւնը պիտի կանգնեցնուի, իսկ այն տեղում, որտեղ Սրբազանն եկեղեցու շինութեան համար յարմար տեղ է գտնում, այդ տեղում առաջնորդարանը շինուի։

Երկար թէր և դէմ վիճաբանութիւնից յետոյ, որոշուեց, որ չորեքշաբթի, ապրիլի 13-ին, Սրբազան Առաջնորդը միմիայն մասնագէտներին ժողովի հրաւիրէ, որոնք իրենց միջից մի մասնաժողով կընտրեն, որ յարմար գտած տեղերի հետ մօտիկից ծանօթանայ և իւր զեկուցումը յայտնէ ժողովին։

—

Ս. ԷՋՄԻԱԾՆԻՑ.—Այստեղ է գտնուում այժմ մագդոկցի գնդ. պ. Ա. Խոսրովեան։ Պարոնը մէկ անգամ էլ եկել է 1891 թ. և նուիրատուութիւններ է ստացել վանքերի օգտին։ Այժմ բերել է մէկ մարմարեայ գերեզմանաքար ս. Հռիփսիմէի գերեզմանի համար, մէկ զեղեցիկ պատկեր ս. Աստուածածնի և մի ջահ։ Պարոնն այս ամենը խոստացել էր զեր. Ներսէս և Սուքիաս եպիսկոպոսներին։ Այդ նուէրները այժմս բերելով, ինքն անձամբ շինել է տալիս ս. նահատակուհու դամբարանը։

Մոռաց. խմբ. Այդ պարոնը Մագդոկում եկեղեցու բագում առանձին մատուռ շինելու մասպրութիւնից պէտք է որ հրաժարուած լինի՝ համոզուելով, որ այդ Հայաստանեայց եկեղեցու ընդունած կարգերից դուրս բան է։

—

Պետերբուրգից հեռագրում են «Մոսկ. Վեդ.»-ին, որ Կովկասի լուսաւորչայի վերայով երկաթուղի անցկացնելու խնդիրը յետաձգուած է երկու տարով։

—

ՄՈՍԿՈՒԱՅԻՑ.—Ինչպէս «Նոր-Դար»-ին գրել էի իւր ժամանակին, ապրիլի 3-ին, տուրը պատարագից յետոյ, ժամը 1-ին, Գասպարեան անկեղանոցում տեղի ունեցաւ Մոսկուայի հայոց ծխականների ընդհանուր ժողովը։ Ժողովին ներկայ էին 83 ծխականներ։ Սաւաբ ձայների մեծամասնութեամբ ընդհանուր ժողովի նախագահ ընտրուեց պ. Սահակ Գր. Մամիկոնեանը։ Մոսկուայի Հ. եկեղեց. երէցփոխ ընտրուեց պ. Արշակ Բ. Հէջուբեան 58 ձայնով. Հայոց եկեղեց. խորհրդարանի անդամներ ընտրուեցան հետեւեալ անձերը՝ պ. պ. Ստեփաննոս Գ. Մամիկոնեան 68 ձայն, Գէորգ Մկրտ. Կաուտսկեան 64 ձ., Խրիստափոր Իլիչ Բանանեան 62 ձայն, նորաւարտ բժիշկ Երիտասարդ Մուրադեան 55 ձայն. իսկ փոխանդամներ ընտրուեցան՝ պ. պ. Ե. Թաղիան. և նորաւարտ բժ. Երիտասարդ Ադէոսեան։

—

Կիրակի, ապրիլի 10-ին, Վանքի աւագ եկեղեցում թեմիս Սրբազան Առաջնորդ գերապատիւ Գէորգ եպիս. Սուրէնեանցը սարկաւագի կոչում տուեց սուրմեցի պ. Բարսեղ Առիւծեանցին, աւարտած Ներսիսեան դպրոցում, հանդուցեալ Յովսէփ աւ. ք. Առիւծեանցի որդուն։

—

Ստացանք պ. Յ. Ճաղարբեգեանի «Բանահիւսութեան տեսութիւն» գիրքը, հրատարակութիւն ճարտարապետ Ն. Գրիգորեանի։ Գրքի մէջ ամփոփուում են գրականութեան բոլոր տեսակների օրէնքներն ու պայմանները. վերջում դրուած է մի յաւելուած, որտեղ ցոյց է տուած, թէ որքէ բանաստեղծական գիրք կարդալիս՝ ինչ բաների վրայ պէտք է ընթերցողն աշադրութիւն դարձնի։ Մեր գրականութեան մէջ առաջին անգամն ենք պատահում մի այսպիսի գրքի, որ կարեւոր է իւրաքանչիւր ընթերցասէր մարդու համար։ Գինն է 60 կոպէկ։

—

Ապրիլի 8-ին Պետերբուրգից Թիֆլիս վերադարձաւ Կովկասի գրաքննչական մասնաժողովի նախագահ Մ. Պ. Հակկելը։

—

Զանազան նշանաւոր և անուն արտիստներն իրենց կոնցերտները տալով հեռացան Թիֆլիսից։ Այժմ Թիֆլիսում է և կըսկսէ իւր ներկայացումները Զատկից յետոյ Նաթան Շուարցը, որ ներկայացնում է նշանաւոր և անուն մարդկանց։

Շուտով Թիֆլիս կըհասնէ Պետերբուրգի և Լոնդոնի օպերայի յայտնի արտիստուհի Մրաւինը և կերգէ ազնուականների բանկի թատրոնում։ Ինչպէս լսում ենք, տոմսակները վաղօրօք ծախուած են և դժուարութեամբ է տոմսակ ձեռք բերուում։

—

Երկրագործութեան և պետական կալուածների մինիստրութիւնը վերջնականապէս օրէնսդրութեան ծրագիր է մշակել մինիստրութեան Կովկասի վարչութիւնների մէջ փոփոխութիւններ մտցնելու մասին։ Այդ ծրագրի համաձայն, Կովկասում գտնուած արքունական բոլոր կալուածքները պիտի բաժանուին տեղական եօթը վարչութիւնների միջև։ Անտառների բոլոր տարածութիւնը, որ կազմում է 5,316,897 դեսեատին, կըբաժանուին 147 անտառապահութիւնների վրայ, որոնց թւում առաջին կարգի անտառապահութիւն լինելու է 25, երկրորդ կարգի—30 և երրորդ կարգի—93. նոր կանոնադրութիւնը մտցնելուն հետ միաժամանակ կըձեռնարկուի և հողերի ընդհանուր բաժանման։ Լենքորանի գետերը պէտք է մաքրուին և կանոնաւորուին անտառի փայտերի շահագործութիւնը կանոնաւորելու համար։

—

Այս տարուս ուսուցչական աշխարհագրական ընկերութեան աջակցութեամբ Պետերբուրգից ուղղորդուում են պ.պ. Գլազունով և Սավրասկի, առաջինն Էլբրուսն ուսումնասիրելու, երկրորդը Անդրկասպեան երկրում հետազօտութիւններ անելու համար տեղագրական և աշխարհագրական տեսակէտներից։

—

ԳԻԼԻՋԱՆԻՑ.—Այս տարի լրացած լինելով Դիլիջան, Պողոս-Քիլիսա, Զարխեչ և Գոչա գիւղերի տանուտէրի ռամկայ գործունէութիւնը, մարտի 27-ին նշանակուած էր Դիլիջանում նոր տանուտէրի ընտրութիւնը պրիստաւի ներկայութեամբ։ Զորս գիւղերիցն էր բաւական մարդիկ կային։ Երկար վէճերից և աղմուկներից յետոյ, որ այժմեան ընտրութիւնների ոգի են կազմում, ընտրուեցին երկուսը՝ դիլիջանցի պ. Մ. Դաւթեան և պողոս-քիլիսեցի պ. Վ. Բաղալեան։ Վերջինս ձայնն աւելի շատ էր, նրան էին ցանկանում բոլոր վերոյիշեալ գիւղերը, բացի Դիլիջանից։ Վերջը պ. պրիստաւն երկուսի միջև վիճակ ձգեց և վիճակն ընկաւ վերջինին, որ և հաստատուեցաւ պրիստաւի և հասարակութեան ստորագրութիւնով. սրան օգնական ընտրուեց առաջինը։

Այժմ չգիտենք թէ ինչ սիստեմ անցաւ դիլիջանցոց մէջ, որ էլ ընտրուածին չեն կամենում, այլ ուզում են որ անպատճառ դիլիջանցի լինի, թէ ինչու—յայտնի չէ։

—

ՍԱԼԵՍԱՆԻՑ.—Մի քանի երիտասարդներ տեղափոխուելով Բաղուից Սալեան սկսել են պարապել երկրագործութեամբ և գիւղատնտեսութեամբ։ Ուրախալի երեւոյթ է դա։

—Տեղս մի խոշոր գողութիւն եղաւ. մէկ յայտնի հարուստ պարսկի խանութից գիշերը գողանում են ոսկի պարսկական դրան մօտ 6000 ր.։ Ոստիկանութիւնը խիստ միջոցների է դիմել։ Մինչև այժմս սնարագործները չեն ձերբակալուած։ Մեզ մօտ գողութիւնները և մարդասպանութիւնները շատ սովորական են պատահում։

—

ՊՕՂՈՍ-ՔԻԼԻՍԱՅԻՑ.—Այստեղ ձմեռ միջակ անցնելով, մարտի միջին դաշտերը բացուեցան ձիւնից, և գիւղացիք իրենց դաշտային պարապմունքը սկսեցին։ Բայց նորից եղանակը ցրտեց և սկսեց ձիւն գալ, ուստի և գիւղացիք թողին իրենց աշխատանքը։ Այսօր, ապրիլի 5-ին, անդադար ձիւն էր գալիս, դարունակում է։

—

«Արարատի» վերջին համարում լրատու է տեսել Արշէն Երեց ստորագրութեամբ մի յօդուած գիւղական քահանաների խնդրի մասին, որ գրաւել է ընդհանուրի ուշադրութիւնը։

Այդ յօդուածի դէմ մի յօդուած գրել Արիստակէս եպիսկոպոս Սեդրակեանը, որի մասին մենք կըխօսենք։

—

Վրէտ։—«Նոր-Դար»-ի 55 Ն-ում տպագրուած լուրը Հայաստեաց Բանկ. ընկ. խորհարարական բաժնում աւարտող ոսոն $^{93}/_{94}$ ուս. տարուայ հինգերորդ շրջանաւարտ 10 աշակերտուհիներից մէկի անունը հաղորդած է.—Նոր. կաթ Մամիկոնեան. պէտք է լինի Նազակաթ Մելքոնեան (ախալցխացի)։

—

ԱՐՏԱՍԱՀՄԱՆԻ ՀԱՑ ԹԵՐԹԵՐԻՑ

Կալկաթայէն կըհաղորդեն հետեւեալը.—«Վարդանանց տօնախմբութեան օրն այստեղ ալ հանդէս կատարուեցաւ Մարդասիրական ճեմարանի մէջ, բայց անշուք կերպով։ Ո՞ւր էր այն անցած տարու ոգեորութիւնը, զոր մեր աստուածաբան և հայկաբան վարժապետին՝ պր. Թորոս Զուղայեցու խանդավառ ատենաբանութիւնը յառաջ բերաւ և որ հանդիսականների կողմէն բուռն ծափահարութիւններով կարտայայտուէր։ Այս տարի փոխանակ մի այդպիսի ատենաբանութեան, մենք ունկամայ ունկնդրեցինք աշակերտների կողմէն ներկայացուած մի զուարճալի կատակերգութեան, որ ոչ իսկ մի ազգային լեզուով էր գրուած, այլ անգլիերէն և այն ալ անգլիացի ռամիկների լեզուով։ Ցաւալի է մեր ազգի այս պակասութիւն. մեր մէջ ամեն ինչ ուռանդով կըսկսուի, բայց յարատեւութիւն չկայ. հապա մէկ երկու տարի կըտեւէ և ահա գործ սկսողի եռանդը կուգան սառեցուցնել կամ նախանձորդների հակառակութիւններն և կամ քաջալերել խոստացողների անտարբերութիւնը։

—Կ. Պոլսի և Թիֆլիսի լրագիրներին մէջ մենք կարդացինք Կալկաթայի աւագ քահանայ և խաչակիր Արժ. Տ. Յովհաննէս Խաչկեանի վախճանման գոյժը և այս առթով գրուած իւր կենսագրութիւնները. մինչև իսկ հրատարակեցին թէ հանդուցեալը այսչափ էջմիածնի վանքին, այսչափ Երուսաղէմի և այլ կտակած է։ Այժմ Կալկաթայէն մարտ 9/21-ին մեր ստացած մի մասնաւոր նամակէ ուրախութեամբ կըտեղեկանանք որ Արժ. Տ. Յովհաննէս Խաչկեան ծերունազարդ քահանայն ողջ է։

—Վառնայէն (Բուլղարիա) կըգրեն.—Փետրուար 21/5 մարտին այստեղ հասած էր Կ. Պոլսէն թատերական մի խումբ, որ երկու օր յետոյ, չորեքշաբթի իրիկուն, «ազատինէփէ» սրահին մէջ ներկայացում տուաւ ընդ հովանաւորութեամբ տեղւոյս կառավարիչ վսհմ. Իվան Տրասոֆի և ի նպաստ Հայոց երկսեռ վարժարանաց։ Սրահաբոյ կարգի մեծ բազմութիւն լցուած էր սրահը։ Ներկայացուելու «Փարիզու հնավաճառը», թատերգութիւն 5 արարուածով

և 4 պատկերով Տիար Թ. Ֆասուլեաճեան, որ Ժանոյի դերը կը կատարէր, յանախ ծափահարութիւններէ արժանացաւ։ Օր. Քնար (Մարի Տիաէ)՝ երկրորդ պարուսիոյն վերջ վարագոյրը փակուելու մէջոցին որոտաձայն ազդակներով և անդադար ծափահարութիւններով ի սա կանչուեցաւ. երբ վարագոյրը բացուելով կրկին ներկայացաւ բեմին վրայ, տեղիս նորակազմ «Սիսակեան ընկերութեան» կողմէն իրեն ընծայուեցաւ մի փունջ, որուն ժապաւէններու ծայրերուն վրայ գրուած էին՝ «Դերասանը կազնուացնէ հոգին, կը բեղմնաւորէ միտքը և կը վառէ սիրտը»։ Մեր կողմն ալ գրուած էր՝ «Ի դիմաց Սիսակեան ընկերութեան Վառնայի»։ Հանրի Պէրվի դերը կատարեց Տիար Գարագաշեան, Կարուսին դերը Տիար Ղ. Փափազեան, Մատամ Բօթարի դերը Տիկին Պերճուհի, որոնք նոյնպէս ծափահարութիւններէ արժանացան։ Տիկին Պերճուհին ընդունեց նաև մի փունջ, որուն ժապաւէններու ծայրերուն վրայ գրուած էին՝ «Դերասանը պաշտօնեայն է այն վեհ դատարանին, ուր լաւն իւր վարձքը և չարն իւր պատիժը կընդունի անաչառապէս»։ Մեր կողմի ծայրը գրուած էր՝ «Ի դիմաց Սիսակեան ընկերութեան Վառնայի»։ Նոյն դիշեր ներկայացման երկրորդ մասին մէջ Տիկին Մ. Սիրանոյշ արտասանեց Շիլլէրէն բանաստեղծական մի հատուած։ Այդ արտասանութիւն յուզիչ տպաւորութիւն ունեցաւ ամենքին վրայ։ Վահ. կառավարիչը մասնաւորապէս իւր շնորհակալութիւն յայտնեց Տիկնոջ, իր կողմէ յատուկ մի պատգամաւոր զրկելով անոր մօտ։ «Սիսակեան» ընկերութիւնը Տիկին Սիրանուշին ալ մէկ փունջ նուիրեց, որուն ժապաւէններու ծայրերը գրուած էին՝ «Դերասանք քաղաքակրթութեան պահնորդներն են, որ կը պաշտպանեն ճշմարիտն ու բարին, գեղեցիկն ու ազնիւը»։ Իսկ Գ.մասին մէջ, որ կատակերգութիւն էր, գլխաւոր դերը կատարեց Տիար Թրեանց խիստ ծիծաղաշարժ կերպով։

ԱՐՇԷՆ ԵՐԷՑԻ ՔԱՐՈԶԸ

«Արարատ»ի մարտի համարը Արշէն Երէց սարսռազդութիւնը կրող մի յօդուածով մի շատ վտիտ խնդիր է չօշափում,—արժանաւոր քահանաներ տալու խնդիրը։

Այդ խնդրի համար շատ խօսուել է, շատ գրուել. բայց և այնպէս նա թարմ է, ժամանակակից և մեր ժողովրդի համար կենսական նշանակութիւն ունի։

Յօդուածը (դիւղական քահանայի քարոզ) մենք կարդացինք մի առանձին հետաքրքրութեամբ։ Առ այդ դրդիչ մեղ Նորին Վեհափառութեան Կոնդակը, ուր ակնարկութիւն կայ Արշէն Երէցի քարոզի մասին։ Կայ չէինք, հասկացանք, որ Արշէն Երէցի քարոզի մասի մէջ ամփոփուում է Նորին Վեհափառութեան հայեացքը մեղ համար կենսական նշանակութիւն ունեցող քահանայական խնդրի մասին։ Կրկնում ենք, այդ պարզ երեսում էր արդեն կոնդակից։ Դրանից յետոյ իւրաքանչիւր հայ, որ անխարդախ սիրով սիրում է իւր ազգային եկեղեցին՝ ազգային սարքերէնաց ոչ յոյժաւոր ազգի-էջ բնականաբար կը կարդայ Արշէն Երէցի քարոզը, ցանկանալով իմանալ, թէ մեղ հետաքրքրող խնդրի մասին ինչ կարծիք է յայտնում Էջմիածնի պաշտօնական օրգանը, կարծիք, որ միևնոյն ժամանակ, ինչպէս երևում է, եկեղեցու Աստուածաբնակ Պետի հայեացքն է։

Դառնանք Արշէն Երէցի քարոզի բովանդակութեանը։

Քահանաներն ընդհանրապէս անուս են, ագէտ և անարժան։ Ո՛չ դպրոցի հնոց են մտել, ո՛չ էլ կրթութեան կատնով ծեծուել ու մխուել։ Ժողովուրդը պաստածու ծարտ է. նրա սիրտը ատելատ է դարձել։ Եւ քահանան ոչինչ չի կարող ազդել, որովհետև նրա խօսքը պողպատով զոդուած չէ։

Ո՞վ է մեղաւոր, ում վրայ է ընկնում յանցանքը. արդեօք հալիկարտոսի, որ ձեռնադրում է, Հոգևոր Բարձր Իշխանութեան, որ թոյլատրում է, թէ ժողովրդի, որ թախանձում, խնդրում է։

Ահա հարիւրաւոր տարիներ թափած խնդրագրի վրայ, վերերական կնքով դրոշմած, ժողովրդեան ներկայացուցիչներ դիմում են Էջմիածին։ Քահանայ են ուզում. դրանք բերել են իրենց գիւղի տիրացուն, որ քահանայի դատակ է և վաղուց ի վեր եկեղեցուն ծառայում է։

Սա շատ սովորական դէպք է, ուսի Վեհարանում միշտ պատրաստ կայ ձեռնադրութեան Մաշտոց։ Եւ Վեհափառն այդ Մաշտոցը տիրացուին է տալիս կարդալու։ Տիրացուն չի կարողանում կարդալ։

Վեհափառն սկսում է բացատրել՝ թէ քահանայի Էջումն ինչ բարձր նշանակութիւն ունի, և թէ այդպիսի տիրացուները որքան անարժան են քահանայութեան։ «Քահանան դիւղական ժողովրդի տէրն է. եթէ քահանան էլ ժողովրդին պէս իւր տգիտութեամբ և վարքով անհամ լինի, ինչ կըլինի ժողովրդին վիճակը»։

—Քահանան ձեր հոգևոր հովիւն է, ասում է Վեհափառը ժողովրդեան ներկայացուցիչներին, նա պէտք է արթուն լինի մարի աչքով և դիշեր ցորեկ հսկէ ձեր վրայ ինչպէս պահապան հրեշտակ։

Հեռաբրքիր է գիւղացու փաստաբանութիւնը։ Գիւղացին երբէք իւր անբան ոչխարը յիմար և ապուշ հովուի չի յանձնում. նա աշխատում է սրատես, հարատև և փութաջան հովիւ գտնել, որը կարողանայ հօտը գայլերից պահպանել, հիւանդ ոչխարներին դեղ ու դարման տնել։

Արդ՝ ինչ է պատճառը, որ այդ միևնոյն գիւղացին իրեն համար հոգևոր հովիւ ընտրելու գործում այդպէս անվայթ է։

Պատճառն այն է, որ մարդ չկայ. մարեղից զանի գիւղացին արժանաւոր ընծայացու։ Ո՞վ է համաձայնում գիւղի վրայ քահանայ ձեռնադրուիլ։ Նոյն իսկ գիւղացին, որ քաղաք է գնացել և ուսում առել, չի ուզում գիւղը դառնալ և գիւղական ժողովրդին ծառայել։ Եթէ քահանայ լինելու միտք անդամ ունենայ, քաղաքում կը լինի։ Այդպէս է ընդհանրապէս։ Եթէ այս տարի ճեմարանի աշակերտներից երկուսը համաձայնել են մի գիւղում քահանայանալ, դա բացառիկ դէպք է։ Բացառիկ դէպքն էլ օրէնք չէ։ Իսկ բացառութեան վրայ կանգնում և բացառութեան մօտ ընդհանուր երևոյթը մոռանում կամ ուրանում է տարօրինակ խելքը և նենգաւոր հոգին.

Պատրաստի, արժանաւոր մարդիկ չունինք ո՛չ միայն գիւղերի, այլ և քաղաքների համար. այնպիսի մարդիկ եմ ասում, որոնց համար քահանայութիւնը ոչ թէ արհեստ է, այլ առաքելութիւն, որոնք հացի չեն ձգտում, այլ աստուածային բանին։ Թեմական ղեկուցիչներն ու ճեմարանն են կոչուած քահանայ պատրաստելու։ Բայց որ տարկոսն է քահանայ դառնում. ամենաչընչին տակտը։ Քարացած սիստեմայի փոփոխութեամբ միայն տակտիկ պատրաստուածները կը համաձայնեին քահանայանալ։ Խօսքս քահանաների տպահովութեան խնդրին է վերաբերում։ Իսկ սիստեմայի փոփոխութեան համար բարի կամքը տակտին քիչ է։ Այդ փոփոխութիւնը տասնեակ տարիների գործ է։ Բայց գիւղական ժողովուրդը քահանայ է ուզում, որ իւր եկեղեցին փակ չմնայ, որ իւր մեռելը առանց թաղման, երեխան առանց մկրտութեան և ինքն առանց ժամի ու պատարագի չը մնայ։

Վեհափառ Կաթողիկոսը մերժում է գիւղացու խնդիրը, նրա բերած անուս տիրացուին չի ձեռնադրում. լաւին էլ գիւղացին չի գտնում։ Եւ ո՞րտեղից հարի արժանաւոր և ուսեալ ընծայացու։ Բուն կուրութիւնն այսպիսի հանգամանքների մէջ ոչինչ չի տեսնիլ և անիմաստ ձայներ կարձակել։ Բայց Արշէն Երէցը հաղորդում է մեղ Վեհափառ Հայրապետի սուր դիտողութեան արդիւնքը։ Բաւական չէ ժողովրդին մերժել, հերիք չէ ազէտներին չձեռնադրել, պէտք է և մարդիկ պատրաստել։ Բարձր հոգևոր իշխանութիւնը ժողովրդի համար արժանաւոր քահանայացուներ պիտի պատրաստէ, ա՛յս է Արշէն Երէցի քարոզի միտքը։

Կար ժամանակ, երբ վանքերը չէ՛ն էին, երբ նրանցում ուսում և դիտութիւն էր ծաղկում և ծաւալում դէպի շրջակայքը։ Այդ վանքերն են հայ ազգին տուել այնպիսի բարձր իդէալ հոգևորականներ, որպիսիք են Մաշտոց, Մովսէս և Փիլիպոս կաթուղիկոսներ, Աւետարանի հոգւով, եկեղեցու և ազգի սիրով լցուած վարդապետներ և երէցներ։ Թողնենք անցեալը. վանական թուականներին մենք վկայ էինք այն մեծ ծառայութեանը, որ Թիւրքիայի հայոց լուսաւորութեան գործին մատուցեց Վարագայ վանքը։ Բայց այսօր մեր վանքերն ամայի են։ Լուսաւորութեան տեղ նրանք գայթակղութիւն են տարածում։ Պէտք է դրանց մէջ դարձեալ վառել ուսման և դիտութեան մաքած հրապը. պէտք է նրանց դնել այն բարձրութեան, այն փառքի գագաթին, ուր գտնուում էին նախկին երանաշնորհ հայրապետների ժամանակ։ Պէտք է վանքերը լուսաւորութեան աղբիւր դարձնել, և այդտեղ գիւղական ժողովրդի համար արժանաւոր քահանաներ պատրաստել։

Այս միտքն է բղխում Արշէն Երէցի քարոզից, որ շատ համակրելի է։ Արշէն Երէցը հոգևոր բարձր իշխանութեան վրայ պարտք է դնում՝ ժողովրդի համար մարդիկ պատրաստել։ Մեղ մնում է անձկանօք սպասել, որ այդ համակրելի միտքը արիւն և մարմին առնի, իրականութիւն դառնայ։

Ց. Ճաղարբէգեան.

ԹՂԹԱԿՑՈՒԹԻՒՆՆԵՐ

ՊԵՏԵՐԲՈՒՐԳ, 4 ապրիլի.— Այս վերջին տարիներումս մեր մէջ սէր է զարթել դէպ երգեցողութիւնը, ուստի ամեն մի շատ թէ քիչ աջող ձայն ունեցողը ձգտում է կատարելագործուելու, միակ նպատակ ընտրելով բեմին ծառայելը։ Սակայն, ի հարկէ, շատ քչերն են իրենց նպատակին հասնում, որովհետև այդ փափագն իրագործելու համար հարկաւոր է ընդունակութիւն, բեմական տաղանդ և երկար ժամանակ. իսկ առաջիններով, այլ և համբերութեամբ, շատ քչերն են օժտուած։

Երկու կամ երեք տարում չի կարելի թէ ձայնը կատարելագործել, բեմական արուեստի հետ ծանօթանալ և թէ ուսելբատուար կազմել. բայց որովհետև մեր հայ երգիչներն ուսանելու համար նշանակում են միայն երկու կամ երեք տարի, ուստի դրանց նպատակը չի իրագործում. Բոլորովին հակապատկեր են այդպիսի երգիչներին նրանք, որոնք սկզբում հասկանալով երգեցողութեան պահանջողութիւնները, նուիրում են իրենց նպատակին, առանց դրա համար ժամանակ նշանակելու, այլ ընդհակառակը զործին նուիրում են անկեղծ և բուռն ցանկութեամբ, կրկնապատկում են իրենց աշխատանքը և երբ այդպիսիներին հարցնում ես թէ՝ երբէք վերջացնում, պատասխանում են թէ յայտնի չէ։

Դրանցից է և մեր հայ երգիչ պ. Այվազեանցը, որը չորս տարի է արդէն ստանում է տեղիս տիկին Էլսոնի երաժշտական ուսումնարանում։

Տիկնոջ ուսումնարանը բաւականին հռչակ ունի, որի պատճառով և տեղեն տարի աշակերտների թիւն աւելանում է։ Իրաւ չնորհալի տիկինը արժանի է իւր հռչակին, որովհետև նա բնարել է իւր ուսուցչուհի նշանաւոր Մարկիզի մեթոդը։

Տիկնոջ մօտ էր ստանում և մեր երգիչ պ. Վարդիվանցը, որը օրերումս վերադարձել է Խարիայից։

Այժմ բացի Այվազեանից տիկնոջ մօտ ստանում են և երկու հայ երիտասարդներ, որոնք տա մի քանի ամիս է ինչ սկսել են պարապել։

Պ. Այվազեանն ունի լաւ ձայն (տենոր) և բեմական ընդունակութիւններ, որը և, չնորհիւ տիկին Էլսոնի ջանասիրութեան, զարմանալի յաջողութեան քայլեր է անում. մանաւանդ որ առ այժմ տիկին Էլսոնը նիւթական վարձ չէ առնում, այլ միայն իրախուսելով երիտասարդի վայելուն տաղան՝ ոչ մի ջանք չի խնայում իւր կողմից, որն ի հարկէ իզուր չէ անցնում. պ. Այվազեանցը զուգընթաց օգտուում է հանգամանքից։

Ահա երկու տարի է, ինչ տիկինն սկսել է տալ իւր ընակարանում աշակերտական ներկայացումներ, որը կայանում է հանդիսականների ներկայութեամբ։ Այս մի նպատակայարմար միջոց է աշակերտներին ընտելացնելու։ Այսպիսի մի ներկայացման ներկայ էի ես երէկ, ապրիլի 3-ին. ժողովուել էին բաւականին հանդիսականներ լսելու նաև չնորհալի տիկնոջը, որը այս երեկոյ մասնակցում էր և երկրորդ՝ նրա աշակերտներին։ Ներկայացրին «Ծաղրածուներ» (Паяцы) օպերը, որի գլխաւոր դերերը կատարում էին տիկինը և պ. Այվազեանցը։ Առանց խօսելու տիկնոջ դեղեցիկ խաղի ու երգելու մասին, միայն կասեմ, որ մեծ աջողութիւն ունեցաւ իւր արժանի աշակերտ պ. Այվազեանցի հետ, որի խաղալը և երգելը մոռացնել էր տալիս, թէ լսողը դանուում է աշակերտական ներկայացման։ Տիկինն ունի և մի քանի ուրիշ լաւ աշակերտներ և աշակերտուհիներ, որոնցից կը յիշեմ օր. «Հալպեցին» և պ. պ. Խոլմինին և Շիշմարեօվին։

Պ. Այվազեանցն երգում է մեր եկեղեցում, որտեղից և ստանում է օժանդակութիւն։ Ի դէպ պէտք է ասած, որ այդ օժանդակութիւնն այնքանքիչ չէ, որ պ. Այվազեանը հազիւ է կարողանում իւր զոյութիւնը պահպանել։

Բ. Թ.

ՔԱՂԱՔԱԿԱՆ

ՔԱՂԱՔԱԿԱՆ ԼՈՒՐԵՐ

Առաջիկայ աշնանը լրանում է Գրանսիայի հասարակապետութեան նախագահ Կարնոյի ծառայութեան ժամանակամիջոցը, հետևապէս աշնանը տեղի կունենայ հասարակապետութեան համար նոր նախագահի ընտրութիւն։ Պարիզի քաղաքական շրջաններում հենց այժմեանից խօսում են այդ ընտրութեան մասին և տալիս են նոյեմբերի 2-ին կատարուելիք նախագահական ընտրութեան համար թեկնածուների անունները, որոնք են. Կարնո, Կազիմիր Պերիէ, Շարմել Լակուր, Դիւպիւի, ծովապետ Ժերվիե, Բրիսոն, Մելին, Վայդեկ Ռուսսո և Banque de France-ի կառավարիչ Մանեոն։

—Հումից հաղորդում են, որ Գերմանիայի կայսրուհին իւր որդոց հետ ապրիլի 4-ին Աիարոյցի գնացել է Վենեսիկ. կայսրուհու այցելութիւնը մասնաւոր է. նա կատենում է Վենեսիկը ցոյց տալ իւր որդոցը։

— Ֆրանսիական նաւատորմիղի դրութիւնը քննելու համար ընտրուած մասնաժողովում ծովապետ Վալոնը կարդացել է մի զեկուցում, որով հակառակ կարծիք է յայտնել զինակիր նաւերը զօրեցուցելու դէմ։ Մասնաժողովի անդամների մէջ այդ առթիւ տարաձայնութիւն է ընկել. Լոկրուան հրաժարուել է մասնաժողովի նախագահութիւնից։

— Լոնդոնում տեղեկութիւն է տացուած, որ բրազիլական ապստամբների առաջնորդ ծովապետ Մելլոն անձնասպան է եղել. Բրազիլիայում յեղափոխութիւնը բոլորովին վերջացած կարելի է համարել։

—Պարիզից ապրիլի 3-ից (15) «Հաւասի գործակալութեանը» հեռագրում են. «Տիմբուկտու ուղարկուած գնդապետ Ժորժը մարտի 25-ին Գունդամի մօտ ջարդ տուեց տուարեգներին. 120 տուարեգ սպանուած են. խլուած են շատ տաւարներ։ Ֆրանսիացիներից վիրաւորուած է միայն երկու հոգի»։

—Բուլղարիայի իշխան Ֆերդինանդ Կոբուրգի Վիեննայում մնալը բացատրում են նրանով, որ նա կամենում է անպատճառ տեսակցութիւն ունենալ Վիլհելմ կայսրի հետ։ Միւս կողմից, ասում են, նա սպասում է Վիեննայի ռուսաց դեսպան իշխան Լոբանով-Ռոստովսկու վերադարձին, որ այժմ Պետերբուրգումն է։ Իշխ. Կոբուրգը յոյս ունի, որ իշխան Լոբանովն ըստ իւր խոստման՝ ռուսաց կառավարութեանը կը բարեմտզրի հաշտ աչքով նայել Բուլղարիայի վրայ։

—Եգիպտոսի մինիստր նախագահ Ռիազ փաշայի տեղ, որ այս օրերս հրաժարական տուեց, խեդիւը լորդ Կիտչենրի համաձայնութեամբ նոր մինիստրութիւն կազմակերպելը յանձնել է Նուբար փաշային։

—Ծովապետ Աւելանը իւր Դանիրէում եղած միջոցին յայտնել է, որ իւր կառավարութեան կողմից կարգադրութիւն չէ եղած նրան Կ. Պոլիս այցելելու մասին։ Բայց և այնպէս Կ. Պոլսում հնարաւոր են համարում, որ ծովապետ Աւելանը Թիւրքիայի մայրաքաղաքը կայցելէ Կ. Պոլսի ռուսաց դեսպան Նիլիդովի իւր պաշտօնատեղին վերադառնալուց յետոյ։

—Վերջերումս ալբանցիների (առնաւուտների) և զարագաղցիների միջև մի ընդհարումն է տեղի ունեցել. առնաւուտները յարձակում են գործել սահմանագլխին մօտ գտնուած զարագաղցիների վրայ և բաւական վնասներ են պատճառել։ Այդ առթիւ Զարագաղի կառավարութիւնը բաւարարութիւն է պահանջել օսմանեան կառավարութիւնից, որ պատասխանել է թէ անկարգութիւն յարուցանողները կը պատժուին. Թիւրքաց կառավարութիւնն այդ առթիւ հրահանգներ է ուղարկել Ցուցի գայմագամին։ Միևնոյն ժամանակ կարգադրուած է, որ առնաւուտներից կազմուած լեռդապահ զօրքի թիւն աւելացնուի։

—Նորվեգիա և Շուեդիա դաշնակից պետութիւնների միջև եղած անհաշտ յարաբերութիւնները չեն մեղմանում. Նորվեգացիները պահանջում են, որ Նորվեգիայի համար արտաքին գործերի առանձին մինիստրութիւն հիմնուի. այդ միտքը մեծ եռանդով պաշտպանում է Նորվեգիայի յայտնի զրող Բեօրնստեօրնէ—Բեօրնսոն։ Միացեալ պետութիւնների թագաժառանգը, ասում են, վատ աչքով է նայում Նորվեգացիների վրայ։ Այդ առթիւ ազգային ժողովում, ուր քննուելիս է եղել արքայական տան ստանալիք ռոճկի չափը, որոշել են յետաձգել թագաժառանգի ռոճկի ընդունելութիւնը, մինչև պաշտօնապէս չհերքուին թագաժառանգի ասած խօսքերը Նորվեգիայի հասցէին. թագաժառանգն երկու դաշնակից պետութիւնների ընդհարման առթիւ իբր ասել է. «Մեղ համար շատ թեթև զինուորական զբօսանք կը լինի Քրիստիանիայ դնալը, առանց կասկածելու, որ մեղ

այնտեղ ոչ մի ընդդիմադրութիւն ցոյց չի տրուիր։ Սրանով, ասում են, Թագաժառանգը յայտնել է իւր արհամարհանքը դէպի Նորվեգիայի զինուորական ոյժը։ Բանի որ Թագաժառանգի այդ խօսքերը պաշտօնապէս չեն հերքուել, ուստի ազգային ժողովը հաստատել է Թագաւորի ռոճիկը, որ անում է 256,000 կրոն, իսկ Թագաժառանգի ռոճիկը՝ 30,000 կրոն, թողել է առանց հաստատելու, մինչև որ նրա ասած վիրաւորական խօսքերի դէմ պաշտօնապէս հերքումն չտպուի։

ԽԱՌՆ ԼՈՒՐԵՐ

Դահլիճ ընդունելութեան. Արդարադատութեան խիստ վճիռներն ի կատար ածող դահճի պաշտօնը, որպէս երևում է, շատերի համար ցանկալի բան է եղել։ Այս օրերս Մադրիդում վախճանուել է Ֆրանցիսկոս Կաստելլանոս գահիճը, որի պաշտօնը ստանձնելու համար իսկոյն ևեթ խնդիր են ներկայացրել երեսուն թեկնածուներ. դրանցից մէկը մայեօր է, երկրորդը՝ փաստաբան, երրորդը՝ հանգուցեալ գահճի ընկերը, որ աւելի վստահութեամբ է խնդրում այդ պաշտօնը, իւր կատարեալ իրաւունքը համարելով ժառանգել իւր հանգուցեալ ընկերոջ պաշտօնը։

—

Նոր-դարձողների դարձուած ընթաց.—Կովկասեան մի քանի կալուածատէրեր վերջին ժամանակներս, «Կովկ.»-ի ասելով, յայտարարութիւններ են ներկայացրել Կայսերական սրսարդական ընկերութեան Կովկասեան ճիւղին. կալուածատէրերը խնդրում են լուրջ ուշադրութիւն դարձնել և քննել նպաստակները ոչնչացնելու խնդիրը և շուտափոյթ լուծումն տալ այդ հարցին, քանի որ նպաստակ՝ երը, որ չափից դուրս շատ բազմանում են, մեծ վնաս են պատճառում գիւղատնտեսութեանը։ Նպաստակները ոչ միայն ոչնչացնում են այդիներում նորածիլ որթերը, այլ և փչացնում են բազմամեայ որթերի և ծառերի արմատները, չհաշուելով այն մեծ վնասը, որ նպաստակները պատճառում են կաղամբին և այլ բանջարեղէններին։ Որպէս յայտնի է, 1892 թ. փետրուարի 3-ին հրատարակած օրէնքով արգելւում է նպաստակների որսը փետրուարի 1 ից մինչև սեպտեմբերի 2 ը. այն ինչ այդ միջոցումն է, որ նպաստակները մեծ վնաս են պատճառում գիւղատնտեսութեանը. այստեղ պիտի ի նկատի առնել, որ նպաստակները դարնան, ամառուայ և աշնան ամիսներում ամիսը մի անգամ նպաստակիկներ են ծընում։

ԼՈՆԴՈՆ. — Պատգամաւորների ժողովը, եօթը ժամեայ պայքարից յետոյ, առաջին ընթերցման միջոցին ընդունեց Զոն Մորլէյի առաջարկած օրինագիծը, որ վերաբերում էր Իրլանդիայից դուրս արուած կալուածների վերադարձին կամ Իրլանդիայում նրանց վերաբնակուելուն։ Հիմնուելու է միջնորդ դատարան, որ կրքննէ կալուածների տուած խնդիրները վերաբնակուելու մասին։ Այժմեան կալուածները զանձարանից վարձատրութիւն կըստանան։ Պարնելականները հակառակում են օրինագծին, թերի համարելով նրան։

ԼԻՍՍԱԲՈՆ.—Խոլերինայի հոմաճարակի պատճառով՝ սահմանում նախազգուշացուցիչ միջոցներ են ձեռք առնուած. Լիսսաբոն բժիշկ է ուղարկուած համաճարակի բնաւորութիւնն ուսումնասիրելու համար։

ՊԵՏԵՐԲՈՒՐԳ, 9 ապրիլ.—Այսօր փակուեց երկաթուղիների ներկայացուցիչների ընդհանուր համագումարը։ Համագումարն արել է հետևեալ կարգադրութիւնները. սակագների համար առանձին արտօնութիւններ տալ Օդեսսայում կազմուելիք ցուցահանդիսի էքսպոնատներին և էքսպոնենտներին. որոշել ցածր սակագին Պետրովսկից մինչև Օդեսսա, Ռադզիվիլով, Վոլոչինսկ և Ունգենի ուղղակուղղ ձկան վրայ. աշունքուանից հրատարակել ուղեցոյց երկաթուղիների ընդհանուր համագումարի կողմից. որոշուած է 30% պակասեցնել սակագինը ուղևորների համար Պետերբուրգից, Մոսկուայից, Վարշաւից և Խարկովից մինչև Օդեսսա, ծովի ջրերը գընացողների համար, և մինչև Սեւաստոպոլ՝ Ղրիմ գնացողների համար։

Երէկ սրտի հիւանդութիւնից յանկարծակի վախճանուեց բժշկական ճեմարանի պրոֆեսոր Սոկոլովը։

ՊԵՏԵՐԲՈՒՐԳ, 10 ապրիլ.—Պաշտօնապէս յայտարարուած է. «Ն. Կ. Բ. Թագաժառանգն ապրիլի 8-ին նշանադրուած է Հեսսեն-Դարմշտատի պրինցեսս Ալիսի հետ։

Գերմանական, աւստրիական և անգլիական լրագիրներն ուրախութեամբ շնորհաւորում են Թագաժառանգի նշանադրութիւնը պրինցեսս Ալիսի հետ։ «Պրաւիտելստ. Վեստ.»-ն ուղղում է հաղորդած վրիպակը. «Հիսսենի և ոչ թէ Հեսսեն-Դարմշտատի պրինցեսս Ալիսն է»։

ՅԱՐԻՑԻՆ.—Վոլգան դէպի վերը մինչև Նիժնի բացուել է նաւագնացութեան համար. այսօր ուղևորւում է առաջին նաւը։

ՊԱՐԻԶ, 11 ապրիլ.—Այսօր Notre Dame եկեղեցում հանդիսաւոր մաղթանք տեղի ունեցաւ Ժան դ'Արքին սուրբերի շարքը դասուած լինելուն առթիւ։

ԱԹԷՆՔ.—Յունաստանի պանապան տեղերում խիստ երկրաշարժը շարունակւում է և շատ թշուառութիւններ է պատճառում։

Խմբագիր—հրատարակիչ՝
ՍՊԱՆԴԱՐ ՍՊԱՆԴԱՐԵԱՆ

ՏԵՂԵԿԱՏՈՒ

Առաջիկայ մայիս 1-ին, Աշխարհամատրան կիրակի օրը, Զիարու հայոց Նորաշէն եկեղեցին պիտի օծուի Թեմիս Սրբազան Առաջնորդի օրհնութեամբ, որն արդէն խնդրուած է Նորին Դերապատուութիւնից։ Այս մասին յայտնարարում ենք ի գիտութիւն եկեղեցւոյս ժողովարարութեան համար շրջագայած ժամանակներս՝ Ախալցխայից, Գորուց, Թիֆլիսից, Վաղայից և այլ տեղերից խնդրողների։

Զիարի Եղիշէ քահ. Գալիամաշեանց։

—

Կովկասեան կայսերական գիւղատնտեսական ընկերութեան պ. պ. անդամները հրաւիրւում են հերթական նիստի, որ լինելու է երեքշաբթի, ապրիլի 12-ին, երեկոյեան 7½ ժամին։

Պարապմունքի առարկաները.

1) Ընթացիկ գործեր,

2) Իշխ. Ի. Զ. Անդրոնիկովի զեկուցումը «Անդրկովկասում պտուղներից քաշած օղիի արտադրութեան մասին» զեկուցման քննութեան շարունակութիւնը։

Ներկայ կարող են լինել նաև կողմնակի անձեր։

ՔԱՂԱՔԱՑԻՆ ԲՈՒԺԱՐԱՆ

—

(Մուխրանեան փ., տ. Կուզանեանի, № 15. հիմնել են Թիֆլիսի քաղաքացիները երեքեւեկ հիւանդների համար 1866 թ. սպրիլ 4-ի յիշատակին)։

Հիւանդների ընդունելութիւնն ամեն օր, բացի կիրակի օրերից, ծմեռն առաւօտեան ժամը 9—1, ամառը (յունիսին, յուլիսին եւ օգոստոսին) առ. ժամը 8—12.

Վ. Մ. Աբծրուէ—ներքին, երեխանց եւ ջղային հիւ. ժամը 10½—12 ամեն օր։

Կ. Ա. Ղուէլ—ներքին եւ երեխանց, ժ. 10½—12 ամեն օր։

Գ. Գ. Գուլուչէանց—խիրուրգ. եւ մէջի անդ. ժ. 11—12 ամ. օր։

Կէն-բժ. Մ. Ա. Խաչատուրեան—կանանց, ժ. 9—11 ամեն օր։

Ն. Գ. Կարուսեան—ներքին եւ երեխանց, ժ. 12—1 ամ. օր։

Ս. Ն. Լէրէ—խիրուրգ եւ մեջի անդ, ժ. 11—12 ամ. օր։

Մ. Ա. Մէլքոնեան—ներքին եւ վենեբական, ժ. 12—1 (երկուշաբ., չորեքշ. եւ շաբաթ օրերը)։

Ա. Գ. Մուրզայեւ—ականջի, կոկորդի եւ քթի, ժ. 9—10 ամեն օր, բացի հինգշաբթի օրուանից։

Կէն-բժ. Լ. Ե. Մաքսուդեանց—կանանց, ժ. 11-12 ամ. օր։

Ե. Ա. Ռոստոմ—ներքին, երեխանց եւ ատամի, ժ. 9—10 ամ. օր։

Մ. Ա. Ռէնդոլոնը—ներքին եւ ջղային, ժ. 11—12 ամ. օր։

Գ. Ն. Սաֆէանեան—ներքին, մեջի անդ. եւ վենեբական, ժ. 11—12 ամ. օր։

Գ. Ա. Թորխանեան—ներքին եւ խիրուրգ., ժ. 12—1 ամ. օր։

Կէն-բժ. Ս. Ա. Շիդոյ—աչքի եւ կանանց, ժ. 11—12 ամ. օր։

Ադոնցէյոյ Ա. Օ. Օշէնչ—ատամների ժ. 10—11 ամ. օր։

Կոնսուլտասիոնն երեքշաբթի եւ ուրբաթ օրերը ժ. 12—1. ծաղկի պատուաստումն—չորեքշաբթի եւ շաբաթ օրերը, ժ. 9—1.

ՀԱՒԼԱԲԱՐԻ ԲԱԺԱՆՄՈՒՆՔ

(Կախէթինսկայա փ., տ Տէրտէրեանի)

Մ. Ա. Քալանթարեան—ժամը 11—12 ամեն օր։

Կէն-բժ. Մ. Ա. Խաչատուրեան—կանանց, ժ. 11—12 երեքշաբթի եւ ուրբաթ օրերը։

ԽԱՐԿՈՎԻՒԻ ԲԱԺԱՆՄՈՒՆՔ

(Բանանց փողոց, տ. Էնֆիաճեանի)

Դ. Բ. Տէր-Աւետիսեան—ժամը 11—12 ամեն օր։

Կէն-բժ. Մ. Ա. Խաչատուրեան—կանանց, ժ. 11—1 երեքշաբթի եւ ուրբաթ օրերը.

Մանրէաբան.—Զբաղուր անձերին բժշկական խորհուրդ եւ դեղեր տրւում են ծրի։

Քաղաքային բուժարանի կառավարիչ՝—
Դ. ՍՏԵՓԱՆԵԱՆ

ՅԱՅՏԱՐԱՐՈՒԹԻՒՆՆԵՐ

ԼՈՑՍ ՏԵՍԱՌ
ԳԻՒՈՒՆ ՀԵՑՈՑ ՊԵՏՄՈՒԹԵԱՆ
ԳԻՐՔ Գ.
ՍԻՄԷՈՆ ԿԱԹՈՂԻԿՈՍԻ ՅԻՇԱՏԱԿԱՐԱՆԸ
կենսագրութեամբ, յաւելուածներով և ծանօթութիւններով հրատարակեց
Դիւտ քահ. Աղանեանց
ՄԻ ՆԿԱՐՈՎ
1096 էջ մեծադիր տպագրութիւն։
Գինը ճանապարհի ծախքով 7 ռուբլի։
Վաճառւում է բացառապէս Կեդրոնական դրավաճառանոցում։
Աշխատասիրողին դիմողները գինը կանխիկ են վճարում։
(585) 10—5

ՀԱՅՈՑ ԼԵԶՈՒԻ
ՈՒՂՂԱԳԻՐՔԻՒԹԻՒՆԸ
Գինն է 50 կոպէկ, իսկ ճանապարհածախսով 65 կ.։
կազմեց Մ. ԱԲԵՂԵԱՆ
Վաճառւում է «Նոր-Դար»-ի խմբագրատանը։

ԹԻՖԼԻՍԻ ՔԱՂԱՔԱՅԻՆ ՎԱՐՉՈՒԹԻՒՆԸ
սրանով յայտարարում է ի գիտութիւն ընդհանրութեան, որ 1894 թուի ապրիլի 27-ին, օրուայ ժամը 12-ին աճուրդ է լինելու կապալով տալու Կուր գետի վրայ՝ Մուխրանեան փողոցի և Սագի միջև գտնուած քաղաքային լաստը (պարոմը) 1895 թուի յունուարի 1-ից, 3 տարի ժամանակամիջոցով։ Պայմաններին կարելի է տեղեկանալ քաղաքային վարչութեան կանցելերիայում օրուայ 10-ից մինչև 12 ժամը։
(296) 6—5

ВНОВЬ ОТКРЫЛАСЬ
ПЕРЕПЛЕТНО-ГАЛАНТЕРЕЙНАЯ
МАСТЕРСКАЯ
на Сололакской улицѣ, въ домѣ кн. Меликова противъ дома кн. Ираклія Грузинскаго.
Принимаю всевозможныя переплетныя-галантерейныя и футлярныя работы.
ЗАКАЗЫ ИСПОЛНЯЮ ТОЧНО и АККУРАТНО
Г. Ходзько.
10—2

III ՓՈԽԱՌՈՒԹԵԱՆ ՄԱՑԻՍԻ 1-Ի ՏԻՐԱԾԻ
ԽԱՂԱՏՈՄՍԵՐ
կարելի է ձեռք բերել վճարելով ամսական 5-ական ռուբլի և աւելի բացառապէս արտօնեալ պայմաններով գլխաւոր գործակալութեան մէջ, որ հիմնել է Կովկասի համար Պետերբուրգի **ՄԱՒՐԻԿԻԻ ՆԷԿԵՆ** բանկային տունը (գոյութիւն ունի 1863 թուից)։—
Սերիաներն եւ №№-ը տրւում են իսկոյն եւ եթ։
(Մուծուած են նոր արտօնութիւններ)։
Գրասենեակը բաց է ժամը 9—2 և 5—8.
Գլխաւոր գործակալութիւնը գտնուում է Երևանեան հրապարակի վրայ, Թամամշեանների քարվանսարային կից նոր շինութեան մէջ։
(293) 30—2.

Состоя въ сношеніяхъ съ Пароходствомъ
И. С. Кошкина
Принимаю грузы для отправленія въ Тифлисъ и на Станціи Закавказской желѣзной дороги
ПО
Московско-Кавказско-Закаспійскому черезъ Рязань-Ростовъ Донъ Сообщенію
Транспортированіе Кладей Э. ПОПОВА
ЕММАНУИЛ ПАПАЗЯНЪ
Москва, Никольская, д. гр. Шереметева.
(294) 3—2.

ՌԵՍՏՈՐԱՆ Վ. ՄԱԴԵՐԻ
Կիրոչնայա եւ Միխայլովսկայա փողոցների անկիւն, սեպ. տուն։
Պատիւ ունիմ յայտարարել յարգոյ հասարակութեանը, որ իմ ռեստորանում միշտ կան տաք կերակուրներ ինչպէս եւրոպական, նոյնպէս և ասիական, և զանազան խմիչքներ, ինչպիսիք են՝ Վիեննայի Կոյլմբախեան և տեղական գարեջրեր, գինիներ ամենալաւ վաճառատներից և ճաշի օրի—սովորական դնով։
Վ. ՄԱԴԵՐ
(278) 12—9

BATEAUX A VAPEUR FRANÇAIS N. PAQUET ET CIE
ՆԱՒԱԳՆԱՑՈՒԹԵԱՆ ՖՐԱՆՍԻԱԿԱՆ ԸՆԿԵՐՈՒԹԻՒՆ
„Ն. ՊԱՔԷ ԵՒ ԸՆԿ.“
Կանոնաւոր և ուղիղ երթևեկութիւն ՄԱՐՍԷԼԻՑ ԲԱԹՈՒՄ չորեքշաբթի օրերը երկու շաբաթը մի անգամ, յունուարից սկսած և ԲԱԹՈՒՄԻՑ ՄԱՐՍԷԼ։
Բաթումից Մարսէյլ գնալիս մտնում է Տրապիզոն, Սամսոն և Կ. Պոլիս քաղաքները։
Բաթումից Պարիզ ուղիղ հաղորդակցութեան տոմսակները սովորական գիներով ունին։
Բաթումից մեկնում է՝
Չորեքշաբթի՝ ապրիլի 20-ին (2 մայիսի) չոգենաւ «Ամենի» կապիտան «Տիլալ» և այդպէս երկու շաբաթը մի անգամ չորեք. օրերը, ժամը 4-ին կէսօրուայ։ Տեղեկութիւններ ստանալու համար թող բարեհաճեն դիմել հետևեալ գործակալներին.
Բաթումում—պ. ՎԻԿՏՈՐ ԳԱՐՆՈՅԻՆ, Նարևրեժնայա։
Թիֆլիսում—պ. ԲԱՐԵԿԵՆԴԱՆԵԱՆԻՆ, Սիօնի փողոց, քարուանսարայ Գէորգ աղայի։
Բագուում—պ. Սամուէլ Դիլդարեանին, Կոլիբեակինսկայա հրապարակ։
Նովորոսիսկում—պ. ԼՈՒԻ ՌԵՆՈՅԻՆ։
(262) 20—18

Тифлисъ. Поз. Цензурою 11-го Апрѣля 1894 г. Տպարան և Վիմագ. Ա. Մելիք-Շահնազարեանցի։ Типо-Лит. А. Меликъ-Шахназаріанца. Воронц. Набережн., д. Григорьянъ. Арм. Приход. Школы.